Մրցույթ՝ «ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի N1 վարժարան» ՊՈԱԿ-ի <<Ֆիզիկա>> առարկայի /8դասաժամ/ և <<Հասարակագիտություն>> առարկայի /8դասաժամ/ ուսուցիչների թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակված հարցաշարի:

Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1),

- մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- <<Հանրակրթության մասին>> ՀՀ Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատաս-խան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձև 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող
փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող

փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարրակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակ-ները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկա-յացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 22.09.2022թ. ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2022թ. սեպտեմբերի 27-ին՝ ժամը 15:00-ին,** ք. Ստեփանավանի N1 վարժարանում, հասցեն՝ ք. Ստեփանավան, Մարշալ Բաղրամյան փողոց, 67/1 դպրոց:

Տեղեկությունների համար զանգահարել (0256)-2-25-76 հեռախոսահամարով: